ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

17.07.2023 թվականին կնքված **N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-23/103-2** գնման պայմանագրի

ք. Երևան «02» օգոստոսի 2023թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Մարտիրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 17.07.2023թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-23/103-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հատկացված **1,485,000.00 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,** շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | Ռեալ Բուսինեսս ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 | ք. Երևան 0014, Արաբկիրի, Աղոնց 6/2, 40 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | Կոնվերս Բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 19300695888100 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 02254149 |
| գլխավոր տնօրենի ժ/պ ———— Բ. Սեդրակյան /ստորագրություն/ Կ.Տ | տնօրեն———— Հ. Մարտիրոսյան /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«17» հուլիսի 2023թ. կնքված
N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-23/103-2 ծածկագրով պայմանագրի
«02» օգոստոսի 2023թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ապրանքի անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր գինը |
| 2 | 42431000/501 | Ամբարձիչ հիդրավլիկ (8տ) ДПГ-18 | հատ | 5 | - | - | - | - | - | - | 1485000 | 1485000 | 1485000 | 1485000 | 1485000 | 1485000 | 1485000 |

* Ծանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով և հրավերում ներկայացվելու են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվելու է կոնկրետ գումարի չափ:

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

գլխավոր տնօրենի ժ/պ ________________ Բ. Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
Ռեալ Բուսինեսս ՍՊԸ
ք. Երևան 0014, Արաբկիրի, Աղոնց 6/2, 40
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300695888100
ՀՎՀՀ 02254149

տնօրեն________________ Վ. Մարտիրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ